ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2020թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ մասը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը, «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 39-րդ պարբերությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2005-2020 թվականների հաստատված գլխավոր հատակագիծը գործողության մեջ է մինչև Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի սահմանված կարգով մշակումը և հաստատումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

2. Սահմանել, որ Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման աշխատանքների ձեռքբերումն իրականացվում է Երևան ենթակայության «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունից «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ մեկ անձից գնման ձևով: Ընդ որում, սույն կետում նշված մեկ անձից գնման գործընթացների նկատմամբ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄԻՆՉԵՎ **2030** ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի գործողության ժամկետը լրանում է 2020 թվականին:

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N184-Ա, «Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի հաստատման մասին» N185-Ա և «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշումներով նախատեսված է Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակումը:

Գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման աշխատանքներն իրականացվելու են Երևան քաղաքի հաստատված 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նախագծի ճշգրտման նպատակով՝ դրա բովանդակության կառուցվածքին համապատասխան՝ ճշգրտման ենթակա ծավալների չափով և հնարավոր լրացումներով՝ ելնելով գլխավոր հատակագծի իրագործման վերլուծության, քաղաքի զարգացման ռազմավարության ուղղությամբ մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով ստացված առաջարկությունների և եզրահանգումների, Երևանի մինչև 2030 թվականը տարածական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցման և գխավոր հատակագծի հայեցակարգի մշակման արդյունքներից:

Նախագծման ժամկետը՝ 2 տարի, քննարկումների, փորձաքննությունների, համաձայնեցումների, և հաստատման ժամկետը՝ 1.5-2 տարի:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 5-րդ մասի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ ենթակետի, գլխավոր հատակագիծը, դրա փոփոխությունները, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

«Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով ահմանված է, որ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 39-րդ պարբերության համաձայն՝ հետևյալ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով՝ պետության և համայնքի հիսուն տոկոսից ավել մասնակցությամբ առևտրային կազմակերպությունից այնպիսի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, որոնք չեն կարող իրականացվել այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից:

Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նախագծի հեղինակը հանդիսանում է «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունը (հիմք՝ ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 30-ի «Երևան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը մշակելու մասին» N 692, 2005թ. մարտի 24-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգը հաստատելու մասին» N443-Ն և 2005թ. դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 2330-Ն որոշումներ):

Ընկերությունն ապահովված է օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ բոլոր լիցենզիաներով և արտոնագրերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման աշխատանքների մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃՇԳՐՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման աշխատանքների մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2020 թվականի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ